Ü²Ê²¶ÆÌ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերի օգտագործման սխեմաները և ներկայացված էլեկտրոնային տվյալները՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Ս. ԲԱՂԱՍԱՆՅԱՆ

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատարող՝ Ա.Հակոբյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ

ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Որոշման ընդունմամբ իրականացվում է համայնքի քաղաքաշինության բնագավառի զարգացման ծրագիրը, անհատական բնակարանաշինության ոլորտում, միաժամանակ կատարվում է հասարակական սպասարկման և առևտրի օբյեկտների ենթակառուցվածքների ընդլայնման և բարելավմանը, տնակների քանդուցքից ազատված կառուցապատման նպատակով նախատեցված տարածքներում ճարտարապետական համալիրների ամբողջականացման և կազմավորման համար: Որոշման ընդունումը կնպաստի քաղաքի տնտեսության և դեմոգրաֆիայի զարգացմանը, անբարեկարգ տարածքների և փողոցների բարեկարգմանը, կանաչապատմանը, արտաքին ճարտարապետական լուծումների շնորհիվ՝ բնակելի թաղամասերը և փողոցային ճակատները բարետես դարձնելուն:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեյում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ, չեն նախատեսվում:

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
**2017** թվականի ______________
**N** _____ որոշման

ՑՈՒՑԱԿ

## Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը մակերեսը քառ.մ | Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| **1.** | Կ.Հալաբյան փող. N 3/4 11-րդ գոտի | 08-001-0125-0115 98.0 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 588 000 |
| **2.** | Կ.Հալաբյան փող. N 9/2 11-րդ գոտի | 08-001-0125-0113 98.0 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 588 000 |
| **3.** | Երևանյան խճ. N 27/4 9-րդ գոտի | 08-001-1125-0082 100.51 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան կառուցում | 600 000 |
| **4.** | Շիրակացու փող. N 11/28 10-րդ գոտի | 08-001-0346-0108 86.8 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան հողամասի ընդլայնում | 440 000 |
| **5.** | Մուսայելյան փող. N 169/4 9-րդ գոտի | 08-001-1395-0018 152.1 | Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | Արտադրամասի կառուցում | 610 000 |
| **6.** | Լիսինյան փող. N 10/4 10-րդ գոտի | 08-001-1043-0076 55.0 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Ավտոտնակի կառուցում | 220 000 |

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ